

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Ավելին իմանալու համար ծանոթացեք սույն փաստաթղթի վերջում ներկայացված հեղինակային իրավունքի վերաբերյալ նշումներին:

© Council of Europe/European Court of Human Rights, 2013. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court. For further information see the full copyright indication at the end of this document.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour. Pour plus de renseignements veuillez lire l'indication de copyright/droits d'auteur à la fin du présent document.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային տեղեկատու թիվ 128

2010թ. մարտ

Paraskeva Todorova–ն ընդդեմ Բուլղարիայի - 37193/07

Վճիռ 25.3.2010թ. [Բաժանմունք V]

Հոդված 14

Խտրականության արգելում

Դիմումատուի գնչուական ծագման պատճառով դատավճռի կատարումը հետաձգելու մերժում. *խախտում*

Փաստեր. Դիմումատուն գնչուական համայնքի ներկայացուցիչ է: Շրջանային դատարանը նրան խարդախության համար դատապարտել էր երեք տարի ազատազրկման և մերժել դատավճռի կատարման հետաձգումը: Վերադաս դատական ատյաններին ներկայացված դիմումատուի բողոքները հաջողություն չէին ունեցել:

Իրավունք՝ Հոդված 14՝ Հոդված 6 § 1-ի հետ համակցությամբ. ներպետական դատարանը, գնահատելով դատավճռի կանխարգելող ազդեցությունը հասարակության մնացած մասի վրա, թերևս պետք է ուշադրություն դարձներ երկրում հանցավորության իրավիճակին վերաբերող առավել ընդհանուր երևույթներին, և նման նկատառումները պետք է որոշակի փաստացի հիմք ունենային, սակայն շրջանային դատարանը սույն գործով կայացրած իր դատավճիռը հիմնավորող որևէ փաստ կամ ապացույց չէր բերել: Բացի այդ, Դատարանը հավաստիացած չէր, որ դիմումատուի էթնիկական ծագումը ընդամենը փոքր գործոն էր հանդիսացել ազգային

դատարանի տրված գնահատումներում, քանի որ վերջինս իր հիմնավորումների հենց սկզբում հատուկ մեջբերումներ էր արել դիմումատուի գնչուական ծագմանը: Ավելին, դատավճռի կատարումը հետաձգելու իր մերժումը արդարացնելու համար՝ շրջանային դատարանը հղում էր կատարել հասարակության մեջ տիրող անպատժելիության ընդհանուր մթնոլորտին՝ ընդգծելով, որ այդ երևույթը հատկապես առկա է փոքրամասնություն կազմող խմբերի մոտ, որոնք դատավճռի կատարման հետաձգումը որպես դատապարտում չեն ընկալում: Այդ հղումից կարելի էր դատել, որ գնչուական համայնքի ներկայացուցչին անհապաղ ազատազրկելը հետապնդել է այն՝ որպես օրինակ ծառայելու նպատակ: Բացի այդ, շրջանային դատարանը դատավճռի կատարումը հետաձգելու կամ չհետաձգելու որոշումը կայացնելիս հաշվի չէր առել դիմումատուի առողջական վիճակը: Վերջապես, վերադաս դատական ատյանները մերժել էին դիմումատուի բողոքները: Հաստատելով շրջանային դատարանի կայացրած վճռի հիմնավորումները՝ նրանք անտեսել էին դատավճռի թերությունները և չէին վերացրել խտրական բնույթ ունեցող ազատազրկման վերաբերյալ կասկածները: Հետևաբար, դիմումատուի նկատմամբ իր էթնիկական ծագման պատճառով ցուցաբերվել էր տարբերակված վերաբերմունք՝ հաշվի առնելով ազգային դատարանի կայացրած դատավճռի երկիմաստ հիմնավորումը՝ դիմումատուին անհապաղ ազատազրկելու հարցում: Ստեղծված իրավիճակը արդարացնելու համար որևէ օբյեկտիվ հանգամանք չէր եղել: Այդ կապակցությամբ Դատարանը, ընդգծելով բողոքարկվող փաստերի կարևորությունը, նշեց, որ ռասիզմի վերացումը եվրոպական բազմազգ հասարակության համար առաջնահերթ խնդիրներից է և որ օրենքի առաջ քաղաքացիների հավասարությունը ամրագրված է Բուլղարիայի ներպետական օրենսդրության մեջ:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Հոդված 41. 5,000 եվրո (EUR)՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Քրեական գործի վերանայումը հանդիսանում է խախտված իրավունքների վերականգնման ամենապատշաճ եղանակը:

© Council of Europe/European Court of Human Rights
This summary by the Registry does not bind the Court.

Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դատարանի քարտուղարության այս ամփոփումը պարտադիր չէ Դատարանի համար

Սեղմեք այստեղ [Նախադեպային տեղեկատվությունների համար](#)

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական լեզուներն են ֆրանսերենը և անգլերենը: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին, որը պատասխանատու չէ թարգմանության որակի համար: Այն կարելի է բեռնել HUDOC-ից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տվյալների բազայից (<http://hudoc.echr.coe.int>), կամ տվյալների ցանկացած այլ բազայից, որին HUDOC-ը տրամադրել է փաստաթուղթը: Այն կարող է վերաթողարկվել ոչ առևտրային նպատակներով՝ պայմանով, որ գործի անվանումը ներկայացվի ամբողջական և ուղեկցվի վերը նշված հեղինակային իրավունքի նշումներով, ինչպես նաև Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդին հղումով: Առևտրային նպատակներով սույն թարգմանությունը մասնակիորեն կամ ամբողջապես օգտագործելու դեպքում, հարկ է այդ մասին տեղեկացնել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int

© Council of Europe/European Court of Human Rights, 2013

The official languages of the European Court of Human Rights are English and French. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court, nor does the Court take any responsibility for the quality thereof. It may be downloaded from the HUDOC case-law database of the European Court of Human Rights (<http://hudoc.echr.coe.int>) or from any other database with which the Court has shared it. It may be reproduced for non-commercial purposes on condition that the full title of the case is cited, together with the above copyright indication and reference to the Human Rights Trust Fund. If it is intended to use any part of this translation for commercial purposes, please contact publishing@echr.coe.int.

©Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013

Les langues officielles de la Cour européenne des droits de l'homme sont le français et l'anglais. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour, et celle-ci décline toute responsabilité quant à sa qualité. Elle peut être téléchargée à partir de HUDOC, la base de jurisprudence de la Cour européenne des droits de l'homme (<http://hudoc.echr.coe.int>), ou de toute autre base de données à laquelle HUDOC l'a communiquée. Elle peut être reproduite à des fins non commerciales, sous réserve que le titre de l'affaire soit cité en entier et s'accompagne de l'indication de copyright ci-dessus ainsi que de la référence au Fonds fiduciaire pour les droits de l'homme. Toute personne souhaitant se servir de tout ou partie de la présente traduction à des fins commerciales est invitée à le signaler à l'adresse suivante : publishing@echr.coe.int.